ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/17 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան **«08» ապրիլի 2019թ.**
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)

Արեն Մեսրոպյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու:

Անդամներ՝

Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)

Գարիկ Բոյաջյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ,

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ:

Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)

Արթուր Շահինյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ,

Վարդգես Դադոյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ:

Հանձնաժողովի քարտուղար՝

Անահիտ Եղիազարյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ:

Նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամների կողմից քննարկվեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվությունը և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «Գուտապ», «Սենտալ» ՍՊԸ-ների, Հայկ Մարտիրոսյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

«Գուտապ» և «Սենտալ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտարարությունները որակվեցին իրականությանը համապատասխանող:

Հայկ Մարտիրոսյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ ենթակետով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն, ուստի Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվեց իրականությանը չհամապատասխանող:

Կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը՝ Հայկ Մարտիրոսյան Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել.

- «Գուտապ» ՍՊԸ-ին՝ 5-րդ չափաբաժնով,
- «Սենտալ» ՍՊԸ-ին՝ 6-րդ չափաբաժնով:

3) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը՝ 1,2,3,4 չափաբաժինները հայտարարել չկայացած:

4) Հաստատել չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:
5) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:
6) Հաստատել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/17 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:
7) Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Գուտապ» և «Սենտալ» ՍՊԸ-ներին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Մեսրոպյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ. Բոյաջյան

_____ Հ. Ծատուրյան

_____ Ա. Շահինյան

_____ Վ. Դադոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Եղիազարյան